[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		Ա	2647127094
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակակշռային)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	13992718 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
(անուն, ազգանուն)

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

26/06/2019 14:45:46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահոգեբուժական, դատահոգեբանական և դատանարկոլոգիական ստացիոնար համալիր փորձաքննություն նշանակելու մասին

12.03.2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Տ.Ղազարյանս, ուսումնասիրելով վարույթիս թիվ 13992718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից հաղորդում է ստացվել, որ զանգահարել է Գուրգեն Գրիգորի Կարապետյանը և հայտնել, որ «Գնունի» շուկայի դիմացի շենքի բակից գողացել են իր սպիտակ «Նիվա» մակնիշի 01 GG 704 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

Պարզվել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 00:00-ից մինչև՝ 11:00-ն ընկած ժամանակահատվածում առևանգել են Վարդանանց 22 շենքի բակում կայանված, Գ.Կարապետյանին պատկանող «Վազ 2121» մակնիշի 01 GG 704 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի ՔՀԽ ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ հանցանք կատարած անձը հանդիսանում է Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը: Պարզվել է նաև, որ Ա. Նոր-Պարոնյանը դեկտեմբերի 24-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, նշված ավտոմեքենայով գնացել է Հր. Քոչար փողոց, որտեղ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է նույն փողոցի 27/11 հասցեում գործող ավտոպահեստամասրի խանութի մուտքի դուռը և խանութից գողացել է ավտոպահեստամասեր:

Դեպքի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2018 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 13992718 քրեական գործը, որը 2019 թվականի հունվարի 16-ին ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի փետրվարի 06-ին Արսեն Նոր-Պարոնյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունը: 2019 թվականի փետվարի 13-ին Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2018 թվականի նոյեմբերի 07-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևան քաղաքի բնակիչ Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը գողություն կատարելու դիտավորությամբ մետաղական լինգի միջոցով բացել է «Մարմարա Գոլդ» ՍՊԸ-ի շրջանակներում գործող, Արարատի մարզի

Գեղանիստ գյուղի 1-ին փողոցի 24 հասցեում գտնվող «Միերմար» հանրախանութի կից հացատան մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել պահեստարան հանդիսացող հանրածանութ և այնտեղից գողացել մոտ 2.000.000 ՀՀ դրամ արժողության տարբեր տեսակի ծխախոտներ և ալկոհոլային խմիչքներ՝ «Մարմարա» ՍՊԸ-ին պատճառելով ընդհանուր խոշոր չափերի՝ 2.000.000 ՀՀ դրամի վնաս:

Դեպքի առթիվ ոստիկանության Մասիսի բաժնում 2018 թվականի նոյեմբերի 07-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 44180618 քրեական գործը, որը 2018 թվականի նոյեմբերի 07-ին ստացվել է ՀՀ ՔԿ Մասիսի քննչական բաժին:

2018 թվականի նոյեմբերի 07-ին Արսեն Նոր-Պարոնյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունը: 2018 թվականի նոյեմբերի 11-ին Արսեն Նոր-Պարոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

2019 թվականի մարտի 01-ին թիվ 44180618 քրեական գործը ՀՀ ՔԿ Մասիսի քննչական բաժնից ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին և նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

2019 թվականի մարտի 04-ին որոշում է կայացվել թիվ 44180618 և թիվ 13992718 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել 13992718 համարով:

2019 թվականի մարտի 10-ին ոստիկանության ԵՔՎ ՊՊԾ գնդի 2-րդ գումարտակի ծառայողները ՃՈ 1-ին գումարտակի 4-րդ դասակի ծառայողների հետ համատեղ ծառայության ընթացքում՝ ժամը 04:15-ին Կոմիտաս 53 հասցեի մոտից գողության փորձ կատարելու կասկածանքով ոստիկանության Արաբկիրի բաժին են բերման ենթարկել Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանին:

Դեպքի առթիվ ոստիկանության Արաբկիրի բաժնում 2019 թվականի մարտի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 14177419 քրեական գործը, որը 2019 թվականի մարտի 10-ին ստացվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի մարտի 10-ին որոշում է կայացվել թիվ 14177419 քրեական գործը թիվ 13992718 քրեական գործին միացնելու մասին:

2019 թվականի մարտի 10-ին որոշում է կայացվել թիվ 13992718 քրեական գործով մեղադրյալ Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանին ձերբակալելու մասին:

Նույն օրը որոշում է կայացվել Արսեն Նոր-Պարոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և լրացնելու, ապա որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս մեղադրանք է առաջադրվել այն հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար, որ նա 2018 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, իր կողմից վարած «Տոյոտա Քեմրի» մակնիշի 35 GP 019 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով անցնելով ՀՀ Արարատի մարզի Գեղանիստ գյուղի 1-ին փողոցի 24-րդ հասցեում գտնվող «Միերմար»

հանրախանութի հարակից ճանապարհով, տեսնելով այն, որոշել է նշված հանրախանութից կատարել գաղտնի հափշտակություն: Այնուհետև ուղղակի դիտավորությամբ իրականացնելով իր հանցավոր մտադրությունը, վերը նշված մեքենան քողարկելու նպատակով կայանել է «Միերմար» հանրախանութի հետնամասում, մեքենայից վերցնելով մետաղական լինգը, մոտեցել է հանրախանութին կից հացատանը, որտեղից մուտքի դուռ կա դեպի հանրախանութ և նշված մետաղական լինգի գործադրմամբ բացել է հացատան մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել նշված հացատուն, այնուհետև մետաղական լինգի գործադրմամբ բացել է հանրախանութի մուտքի դուռը՝ ապօրինի մուտք է գործել որպես պահեստարան հանդիսացող «Միերմար» հանրախանութի սրահ և այնտեղից գողության եղանակով գաղտնի հափշտակել է ընհանուր խոշոր չափերով՝ 2.000.000 ՀՀ դրամի տարբեր ապրանքանիշի ծխախոտներ, կոնյակներ, քաղցրավենիքներ և մեկ հատ <<Մոտոկ>> ապրանքանիշի բջջային հեռախոս, ապա հիշյալ ապրանքները լցրել է թվով 5 պարկերի մեջ, որոնցից 3-ը տեղափոխել և դրել է իր կողմից վարած «Տոյոտա Քեմրի» մակնիշի 35 GP 019 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բեռնախցիկը, այնուհետև նկատելով հանրախանութին մոտեցող Հավհաննիսյան Հովհաննեսին դիմել է փախուստի:

Բացի այդ, Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը 2018 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, օգտվելով տարածքում անձանց բացակայության հանգամանքից՝ տեխնիկական միջոցի օգտագործմամբ, Երևան քաղաքի Հրաչյա Քոչար փողոցի 27/11 հասցեում գտնվող, Արման Ռոբերտի Այվազյանին պատկանող ավտոպահեստամասերի խանութի մուտքի դուռը բացելու եղանակով ապօրինի մուտք է գործել ներս և գաղտնի, անհատույց, ապօրինի, շահադիտական եղանակով հափշտակել է Արման Ռոբերտի Այվազյանին պատկանող զգալի չափերով՝ ընդհանուրը 106.100 ՀՀ դրամ արժողությամբ 13 հատը «CORTECO», 2 հատը «MICRONHIR», 4 հատը «HENGST», 2 հատը «BOSCH» տեսակի ավտոմեքենաների օդազտիչներ:

Բացի այդ, Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը 2019 թվականի մարտի 10-ին՝ ժամը 04:10-ի սահմաններում, ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ տեխնիկական միջոցի օգտագործմամբ փորձել է բացել շինություն հանդիսացող Երևան քաղաքի Կոմիտասի պողոտա 55/61 հասցեում գործող <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲ ընկերության դեղատան մուտքի դուռը և ապօրինի մուտք գործել ներս, սակայն վերջինիս գործողությունները նկատել է նույն տարածքում առկա մանրածախ առևտրի տղավարների գիշերային հսկողություն իրականացնող պահակ Սերգեյ Թադևոսյանը, ով բղավել և փորձել է մոտենալ Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանի, ինչի արդյունքում վերջինս իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունը ավարտին չի հասցրել և դիմել է փախուստի, սակայն քիչ անց Երևան քաղաքի Կոմիտասի պողոտա 53 հասցեի մոտ բռնվել է ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 2-րդ գումարտակի և ՃՈ 1-ին գումարտակի 4-րդ դասակի ծառայողների կողմից:

Այսպիսով, Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և

34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նաատեսված հանրորեն վտանգավոր արաքների կատարում: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը՝ երկու ամիս ժամկետով:

Առաջադրված մեղադրանքում Արսեն Նոր-Պարոնյանը իրեն մեղավոր է ճանաչել մասնակի, ընդունելով 2018 թվականի նոյեմբերի 08-ին կատարված գաղտնի հափշտակության վերաբերյալ իրեն առաջադրված մեղադրանքը, իսկ մյուս երկու դրվագների կապակցությամբ հայտնել է, որ ինքը դրանք չի կատարել և անհիմն է մեղադրվում:

Արսեն Նոր-Պարոնյանը ծնվել է 1985 թվականի հունիսի 25-ին: Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ վերջինս 2018 թվականի սեպտեմբերի 20-ից հաշվառված է ՀՀ ԱՆ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում՝ «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում» ախտորոշմամբ: Պարզվել է նաև, որ Արսեն Նոր-Պարոնյանը 2019 թվականի մարտի 10-ին կատարած հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ և կազմված համապատասխան արձանագրությամբ ալկոհոլի պարունակությունը եղել է 0.563 մգ/լ:

Նկատի ունենալով, որ Արսեն Նոր-Պարոնյանը մոտ հոգեկան հիվանդության առկայությունն ու բնույթը որոշելու, հանցագործության կատարման պահին նրա հուզական վիճակը, մեղսունակության լինելու հանգամանքը և գործի համար կարևով նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության, դատական հոգեբանության և դատական նարկոլոգիայի բնագավառների հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ և 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Նշանակել դատահոգեբուժական, դատահոգեբանական և դատանարկոլոգիական համալիր ստացիոնար փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող միջգերատեսչական դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննությունների հանձնաժողովին, ՀՀ ԱՆ «Հանրապետական նարկոլոգիական կենտրոն» ՓԲԸ-ի փորձագետներին

2. Պարզաբանելու համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

- Արսեն Նոր-Պարոնյանը նախկինում և ներկայումս որևէ հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապում և երբվանից:
- Եթե Արսեն Նոր-Պարոնյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա որոշման մեջ նշված հանցավոր արարքները կատարելու պահին հիվանդությունը զրկել է

նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե ոչ:

- Արսեն Նոր-Պարոնյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Եթե Արսեն Նոր-Պարոնյանը անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:
- Արսեն Նոր-Պարոնյանը ալկոհոլամոլությամբ տառապում է, թե ոչ, եթե տառապում է ալկոհոլամոլությամբ, ապա նա բուժման կարիք ունի, թե ոչ:
- Եթե այո, ապա ինչ տեսակի և այդ կապակցությամբ կան, արդյոք, հակացուցումներ, թե ոչ:
- Օղու օգտագործումը կարող էր, արդյոք, Արսեն Նոր-Պարոնյանին հասցնել այնպիսի հոգեկան վիճակի, որ նա զրկվեր իր գործողությունների հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից:
- Որոշմամբ նկարագրված հանցավոր արարքները կատարելու պահին Արսեն Նոր-Պարոնյանը գտնվել է, արդյոք ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտի վիճակում կամ այնպիսի հուզական վիճակում, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:
- Ինչ անհատական հոգեբանական առանձնահատկություններ ունի Արսեն Նոր-Պարոնյանը և դրանք կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակներում նրա վարքի վրա:
- Ունի արդյոք, Արսեն Նոր-Պարոնյանը հոգեկան հիվանդության հետ չկապված հոգեկան զարգացման շեղումներ, թե ոչ, եթե այո, ապա ինչ հոգեկան բնութագրեր ունի նա:
- Ընդունակ է, արդյոք, Արսեն Նոր-Պարոնյանը ճիշտ ընկալել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները և դրանց վերաբերյալ ճիշտ ցուցմունքներ տալ՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, հոգեկան վիճակը, անհատական հոգեբանական առանձնահատկություններ, մտավոր զարգացման մակարդակը:
- Արսեն Նոր-Պարոնյանը իր հոգեկան վիճակով ներկայումս կարող է մասնակցել քննչական և դատավարական որևէ գործողության:

3. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին.

- փորձաքննության կատարման մասին օրվա մասին նախօրոք հայտնել ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր քննչական բաժին՝ մեղադրյալ Արսեն Նոր-Պարոնյանին ներկայացնելու համար, ով հանդիսանում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանվոր:
- Թիվ 13992718 քրեական գործի նյութերը և Արսեն Նոր-Պարոնյանին վերաբերվող բժշկական փաստաթղթերը կտրամադրվեն լրացուցիչ:

Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքները և պարտականությունները: Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ **Գ.Տ.Ղազարյան**